

ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵՋՎԻ ԻՆՍԻՏՈՒՏ

ՆԱՐԻՆԵ ԱՏԵՓԱՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

**ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ
ՀԱՄԱՐՁԵՔՆԵՐԸ ԻՄՊԱՆԵՐԵՆՈՒՄ**

**Ժ.02.02. - «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՄԵՐԱՏԱԿԱՆ ԼԵՋՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍԻԴԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2022

**Աղենախոսության թեման հասկապվել է Երևանի պետական
համալսարանում:**

Գիտական դեկանալու

**բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ Աշոտ Սերգեյի Աբրահամյան**

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

**բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Հայկ Մնացականի Խաչարյան**

**բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ Հոհիկսիմե Լևոնի Օհանյան**

Առաջարար կազմակերպություն՝

**Վալերի Բոյոսովի անվան
պետական լեզվաբանական համալսարան**

**Աղենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. հոկտեմբերի 31-ին՝ ժամը 15⁰⁰-ին, <<ԲՈԿԻ՝ <<ԳԱԱ Հր.Աճայյանի անվան լեզվի ինստիտուտում
գործող Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում (թ. Երևան
0015, Գրիգոր Լուսավորչի փ. 15):**

**Աղենախոսությանը կարելի է ծանոթանալ <<ԳԱԱ Հր.Աճայյանի անվան
լեզվի ինստիտուտի գրադարանում:**

Սեղմագիրն առաքված է 2022թ. սեպտեմբերի 15-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝**

Ն.Մ. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հոլովական իմաստների արտահայտման հարցը լեզվաբանության մեջ ամենաշատ քննության առնված հարցերից մեկն է: Հոլովական իմաստներ ունեն անխստիր բոլոր լեզուները, հոլովներ՝ ոչ բոլորը: Սույն աշխատանքում զուգադրության եղբեր են ընտրվել հայերեն և խապաներեն լեզուները, որտեղ հայերենի հոլովական իմաստների խապաներեն համարժեքներն արտահայտվում են նախորավոր կապակցություններով, այսինքն՝ վերլուծական եղանակով:

1. Հետազոտության նպատակն է.

Հնարավորինս մանրամասն ներկայացնել հայերենի հոլովական իմաստների և խապաներենում համապատասխան իմաստների արտահայտությունների համարժեքները:

Քննել հայերենում և խապաներենում բառահարաբերության արդյունքում առաջացած նմանությունները և տարբերությունները:

Զուգադրական քննությամբ հստակ պատկերացում կազմել շարահյուսական տարրեր կիրառություններում հոլովների արտահայտած իմաստների և այդ հոլովների իմաստային ընդգրկման մասին:

Գործնականում նպարակ է հեկապնդվել.

Օգտակար լինել հայերենագիտական և խապաներենագիտական հետազոտությունների ընդլայնմանը:

Նպաստել լեզվի դասավանդման մեթոդաբանության, թարգմանաբանության և լեզվաբանական որոշակի հետազոտություններին:

Հետազոտության մեջ կիրառել ենք հետևյալ սկզբունքները.

Զուգադրության ելակետ լեզուն հայերենն է՝ իր հոլովների և կապական կապակցությունների հիմնական իմաստներով ու գործառույթներով:

Հայերենի հոլովական իմաստների մասին խոսելիս նախապատվություն է տրվել յոթ հոլովի տեսությանը՝ համարելով այն բովանդակության պահն բազմակողմանի ուսումնասիրության և մեր առջև դրված խնդիրի քննության համար նախընտրելի տարբերակ:

Անդրադարձ է կատարվել ինչպես լեզուների նմանությունների ու տարբերությունների որոշման ելակետային սկզբունքների լեզվաբանական տեսություններին, այնպես էլ հոլովների վերլուծական համարժեքներին, այն է՝ կապական կապակցություններին:

Նախդիրների քննության մեջ առանձնացվել են նրանց առանցքային բնութագրերը:

2. Թեմայի արդիականությունը.

Զուգադրական քննության ենթարկել հայերենի և խապաներենի հոլովական համակարգը, որը դեռևս չի արժանացել ամբողջական ուսումնասիրության. Եղած

դիտարկումներն էլ առնչվում են քննվող խնդրի մասնավոր կողմերի ուսումնասիրությանը:

Հայերենի և հսպաներենի վերաբերյալ զուգադրական աշխատանք կատարողներին հնարավորություն ընձեռել՝ ա) վերանայելու և նորովի գնահատելու հորովի, հոլովական իմաստների, կապերի և նախդիրների մասին շրջանառվող մեկնարանությունները, բ) ուսումնասիրելու հայերենի հոլովական իմաստներից յուրաքանչյուրի հսպաներեն համարժեքները՝ ըստ կիրառության հաճախականության:

Բացահայտել զուգադրվող լեզուների ընդհանրությունները և տարբերակիչ առանձնահատկությունները, ինչպես նաև բովանդակության ու արտահայտության պլաններում դրանց իրացման հնարավոր եղանակները:

3. Հետազոտության նորույցը.

Հայ լեզվաբանության մեջ առաջին անգամ գիտական ուսումնասիրության են Ենթարկվում հայերենի հոլովական իմաստների և հսպաներենում համապատասխան իմաստների արտահայտությունների համարժեքները:

Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ թերևս արժևորվում է ատենախոսության տեսական ու գործնական նշանակությունը, քանի որ այն հայերենի հոլովական իմաստների և հսպաներենում այդ իմաստների համակարգված նկարագրության և բազմակողմանի ըննության առաջին փորձն է:

4. Ըստ հարցադրումների ընդհանուր դրվագքի՝ հետազոտությունը բնութարանական տիպի է. սահմանափակվում է երկու լեզուների զուգադրությամբ, իսկ ընդհանրութարանական հարցադրումներին անդրադարձ է արվել միայն լեզուների միջև նմանությունների ու տարբերությունների որոշման ելակետային սկզբունքների, ինչպես նաև ընդհանուր լեզվաբանության մեջ հոլովի քերականական կարգի վերլուծություններում:

5. Հետազոտության հայեցակերպ երկու լեզուների փաստերի համաժամանակյա ըննությունն է, որի ընթացքում կիրառվել են մասնավորապես համաժամանակյա նկարագրության և համաժամանակյա զուգադրության լեզվաբանական մեթոդները:

6. Հետազուրության հայեցակարգային հիմք են դարձել հիմնականում հայերենագիտական և հսպաներենագիտական աշխատությունները՝ նվիրված հոլովի քերականական կարգի ու նախդիրների, դրանց բնութագրման ու դասակարգման հիմնախնդիրներին:

7. Հետազուրությունը սերտորեն առնչվում է թարգմանության դեսությանը՝ հավակնելով հուշելու հայերեն-հսպաներեն (ինչպես նաև հսպաներեն-հայերեն) թարգմանությունը որոշ չափով դյուրին դարձնելու ուղիներ և գործնական նյութ ապահովելու թարգմանության տեսության համար. Ներկայացվել են զուգադրվող

լեզուներում միևնույն իմաստների արտահայտման միջոցները, որոնց միջև հնարավոր է որոշակի հարաբերակցություն սահմանել: Ենելով հեղագործության ընդհանուր ուղղվածությունից՝ նախ ներկայացվել է հայերեն օրինակը, ապա՝ նրա իսպաներեն համարժեքը:

8. Աշխարհանքի կառուցվածքը բխում է ատենախոսության առջև դրված նպատակներից և խնդիրներից: Աշխատանքի հիմնական մասը 179 էջ է, այն ունի հետևյալ բաժինները՝ Ներածություն, 3 գլուխներ, Եզրակացություններ և օգտագործված գրականության ցանկ: Դրանց կցված է հավելված՝ 43 էջ ծավալով:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: Այսուհետ անդրադարձ է կատարվում զուգադրական լեզվաբանության խնդիրներին, նպատակներին, մի շարք հեղինակների կողմից առաջադրված տեսություններին, եղած տեսություններում կատարված փոփոխություններին: Այս բաժնում ներկայացված տեսություններով հիմնավորվում է մեր հետազոտության ողջ նյութի ընտրությունը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ. ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՄԲՈՆՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԱՐՑԵՐ

Այս գլխում հանգամանորեն ներկայացվում են հոլովի քերականական կարգի ընդհանուր լեզվաբանական և հայերենագիտական մեկնաբանությունները, որոնք ընդգրկում են հոլովի քերականական կարգի մասին առաջադրված տեսակետներից առավել ամբողջականները: Միաժամանակ պահպանվում են հոլովների ցանկացած հարցի քննության համար ելակետային համարվող հարցուցիչ և շարակարգի հիմնադրույթները: Բաղկացած է երկու ենթագլխից.

1.1. Ենթագլխում («Հոլովի քերականական կարգի ընդհանուր լեզվաբանական տեսություններ») նվիրված է հոլովի քերականական կարգի, ինչպես նաև հոլովի ծևային և իմաստային հատկանիշների գնահատման լեզվաբանական մի շարք տեսությունների քննությանը:

Հանգամանալից ներկայացվում են հոլովի քերականական կարգի մասին մշակված կարծիքներից մեծ շրջանառություն ունեցողները, որոնք առանձնանում են հատկապես նրանով, որ սրանցում լեզվաբանները (Օ. Եսպերսեն, Լ. Ելմսլ, Ե. Կուրիլովիչ, Ռ. Յակոբսոն, Զ. Ֆիլմոր, Ս. Կացնելյոն) փորձել են դուրս բերել հոլովների ընդհանրական իմաստները՝ անփոփոխակները:

1.2. Ենթագլխում («Հոլովական իմաստի և հայերենի հոլովների քանակի մեկնաբանումը հայ լեզվաբանության մեջ») դիտարկվում են հոլովական իմաստի և հոլովի քերականական կարգի առանձնահատկությունները հայ լեզվաբանության մեջ:

Այս ենթագլխում մանրամասնորեն խոսվում է հոլովի սահմանման, հոլովների դասակարգման և հայ լեզվաբանության մեջ հոլովների քանակի վերաբերյալ առաջարկված երեք տեսությունների մասին:

**ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ. ՀՈԼՈՎԱԿԱՆ ՈՒ ԿԱՊԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ
ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ**

Այս գլխում անդրադարձ է կատարվում ժամանակակից հայերենի հոլովների, կապական կապակցությունների և խսպաներենի նախոդիների ու նախոդավոր կապակցությունների մասին առաջարկված ըմբռնումներին ու տեսակետներին, տրվում է հոլովների իմաստային դաշտերի նկարագրությունը: Բաղկացած է երեք ենթագլխուց:

2.1. Ենթագլխում («Հոլովական իմաստի հարցը») ներկայացվում են հոլովական իմաստի ըմբռնման հիմնահարցերը: Ի մի են բերվում հոլովների գլխավոր և երկրորդական իմաստները, որոնք հայերենի և խսպաներենի զուգադրման հիմք են դառնում աշխատության վերջին գլխում:

2.2. Ենթագլխում («Կապական կապակցությունները որպես հոլովների վերլուծական համարժեքներ») քննվում են կապական կապակցությունների գործառույթի, նախադասության մեջ ունեցած դերի, ինչպես նաև կապերի իմաստային դասակարգման հարցերը:

2.3. Ենթագլխում («Հոլովական իմաստների արտահայտությունն իսպաներենում. նախոդիները և նրանց իմաստային դասակարգումը») հետազոտության նյութ են դառնում իսպաներենի նախոդիներն ու նախոդավոր կապակցությունները՝ որպես հայերենի հոլովական իմաստների արտահայտության համարժեքներ: Ներկայացվում են միայն նախոդային համակարգի ուսումնասիրության մեջ զգայի ներդրում ունեցող ժամանակակից քերականների տվյալ բնորոշումները ինչպես նախոդի վերջնական սահմանման, այնպես էլ նախոդիների դասակարգման հարցերում:

**ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ. ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔ
ՁԵՎԿԵՐՆ ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ**

Հետազոտության առաջին և երկրորդ գլխուներում ներկայացված նյութը աշխատանքի վերջին՝ երրորդ գլխում կատարված վերլուծությունների հիմքն է: Երրորդ գլխում ներկայացված հոլովների իմաստային դաշտը ներառու է իմաստային այն ենթահամակարգերը, որոնց օգնությամբ հնարավոր է ընդհանուր պատկերացում կազմել գործադրվող լեզուների բովանդակության և արտահայտության կողմների համապատասխանությունների, ինչպես նաև անհամապատասխանությունների մասին: Այս գլխում պահպանվում է ոչ միայն հարացուց-շարակարգ համադրությունը, այլև հոլովների կախյալ և անկախ դրսուրումների համակարգումը՝ ըստ բացարձակության և սահմանափակված հատկանիշների:

Երրորդ գլխի յոթ ենթագլուխներում («Ուղղական հոլով», «Սեռական հոլով», «Տրական հոլով», «Հայցական հոլով», «Բացառական հոլով», «Գործիական հոլով», «Ներգոյական հոլով») ներկայացվում են ինչպես վաղ շրջանի, այնպես էլ

Նոր ժամանակների քերականների վերլուծությունները հոլովների վերաբերյալ։ Տրվում են բոլոր յոթ հոլովներով արտահայտվող իմաստներն ու այդ իմաստների խսպաներեն համարժեքները։ Զուգադրական քննության արդյունքները ներկայացվում են մի կողմից՝ որոշ հոլովածներով արտահայտվող գիտավոր և երկրորդական իմաստներով, իսկ մյուս կողմից՝ կապերով արտահայտվող իմաստներով։

Հայերենի՝ հոլովներով արտահայտված իմաստների և այդ իմաստների խսպաներեն համարժեքների շարքում նկատելի են հետևյալ առանձնահատկությունները (հայերենի հոլովական իմաստները տրվում են ըստ կիրառության հաճախականության՝ յուրաքանչյուրի համար օրինակների մեկական նմուշով)։

1. Բացահայտման իմաստ. Արտահայտվում է հայերենի յոթ հոլովներով։ Խսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 92%, օր.՝ Ապրում էր թռչակով՝ իր ապրուստի միակ միջոցով։ – *Vivía en una pensión, (*en*) su único medio de subsistencia.*

Աննախդիր (Փ նախդիր) կապակցություններ՝ 8%, օր.՝ Չկարողացավ ուտել հրաց՝ երեխաների վերջին պատառը։ – *No pudo comer el pan, el último pedazo de los platos.*

2. Առարկային ստորոգվող հատկանիշի իմաստ. Արտահայտվում է հայերենի վեց (բացառությամբ հայցական հոլովի) հոլովներով։ Խսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 89%, օր.՝ Տուն վերադառնալու ճանապարհին էր, երբ հորդառակ անձրև սկսվեց։ – *Estaba en camino de casa cuando empezó una lluvia violenta.*

Աննախդիր (Փ նախդիր) կապակցություններ՝ 11%, օր.՝ Երջանիկ մարդ էր։ – *Era un hombre feliz.*

3. Ժամանակային իմաստ. Արտահայտվում է հայերենի վեց հոլովներով (բացառությամբ ուղղական հոլովի): Խսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 70%, օր.՝ Ապրիլին ժողովուրդը հեղափոխություն արեց։ – *La gente realizó una revolución en abril.*

Բարդ նախդրավոր կապակցություններ՝ 17%, օր.՝ Նա մանկությունից երազում էր թժիշլ դառնալ։ – *Sonaba con ser un médico desde (desde por) la infancia.*

Նախդրավոր դարձվածներով ծԱռավորված կապակցություններ՝ 13%, օր.՝ Այսօրվանից սկսվում են դպրոցականների զարնանային արձակուրդները։ – *A partir de hoy, comenzaron las vacaciones de primavera de los escolares.*

4. Տարածական իմաստ. Արտահայտվում է հայերենի հինգ հոլովներով (բացառությամբ ուղղական և ներգոյական հոլովների): Խսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 55%, օր.՝ Մինչև մահ մագի մագանին չհանեց: – *Hasta la muerte no se quitó el anillo del dedo.*

Բարդ նախդրավոր կապակցություններ՝ 30%, օր.՝ Մեր զորքը թշնամիներին թիկութից հարված հասցրեց: – *Nuestro ejército atacó al enemigo desde (desde por) trasero.*

Նախդրավոր դարձվածքներով ճևավորված կապակցություններ՝ 15%, օր.՝ Հայաստանից մեկնեցին Մոսկվա Մինվողիով: – *Tomaron un vuelo vía (por vía de) Frankfurt desde Bagdad.*

5. Հատկանիշի իմաստ. Արտահայտվում է հայերենի չորս հոլովներով (բացառությամբ դրական, հայցական և բացառական հոլովների): Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 80%, օր.՝ Մեկնեցինք *Տաթևի վանք* – *Fuimos monasterio de Tatev.*

Աննախդիր (Փ նախդիր) կապակցություններ՝ 20%, օր.՝ *Un albañil campesino se hizo famoso en todo el mundo por su habilidad.* – *Մի որմնադիր գյուղացի ամբողջ աշխարհում հայտնի դարձավ իր վարպետությամբ:*

6. Սահմանափակման իմաստ. Արտահայտվում է հայերենի երեք՝ բացառական, գործիական և ներգոյական հոլովներով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ *Տարիքով փոքր էր, բայց արդարուած մնեց էր երևում:* – *Era joven para su edad, pero se veía mucho mayor.*

7. Գործողություն կատարողի իմաստ. Արտահայտվում է հայերենի երկու՝ ուղղական և սեռական հոլովներով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 67%, օր.՝ *Չուրը ցամաքելու պայմանով հսկայական հողաբարածքներ մնացել են առանց ոռոգման:* – *Debido al drenaje del agua, grandes extensiones de tierra quedaron sin riego.*

Աննախդիր (Փ նախդիր) կապակցություններ՝ 33%, օր.՝ *Հայրս բժիշկ է:* – *Mi padre es un doctor.*

8. Մասի իմաստ. Արտահայտվում է հայերենի երկու՝ սեռական և բացառական հոլովներով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ *Տղաներից ու աղջկներից կազմված թիմերը մրցել են թիմային մրցաշարում:* – *Equipos de chicos y chicas compitieron en un torneo por equipos.*

9. Ամբողջի իմաստ. Արտահայտվում է հայերենի երկու՝ սեռական և բացառական հոլովներով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ Կուսակցության ղեկավարներն ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին համագումարին: – Los líderes del partido participaron activamente en el congreso.

10.Գործողությունը կրողի իմաստ. Արտահայտվում է հայերենի երկու՝ սեռական և հայցական հոլովներով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 67%, օր.՝ Աշխարհավարձի փոխանցումը կապարվում է բանկային համակարգով: - La transferencia de sueldo se realiza a través del sistema bancario.

Աննախդիր (Փ նախդիր) կապակցություններ՝ 33%, օր.՝ Հորքերը գրավեցին բարածաշրջանը: - Las tropas ocuparon la región.

11.Չափի իմաստ. Արտահայտվում է հայերենի երկու՝ հայցական և գործիական հոլովներով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 50%, օր.՝ Ավտոբուսների կանգառը մեծացրին հիսուն մետրով: - La parada de los autobuses se ensancharon por cincuenta metros.

Աննախդիր (Փ նախդիր) կապակցություններ՝ 50%, օր.՝ Որդու վերադարձից հետո ապրեց միայն մեկ օր: - Vivió solo un día después del regreso de su hijo.

12.Ծագման իմաստ. Արտահայտվում է հայերենի երկու՝ սեռական և գործիական հոլովներով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ Ծերունու միակ ժառանգն այդպես էլ չարդարացրեց ծնողների հոգսերը: - El único heredero del anciano no estuvo a la altura de las esperanzas de sus padres.

13.Հիմունքի իմաստ. Արտահայտվում է հայերենի երկու՝ բացառական և գործիական հոլովներով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 38%, օր.՝ Նրա լացակումած աչքերից երևում է, որ նրա հետ ինչ-որ դժբախողություն է պատահել: - Se veía de sus ojos lacrimosos que algo malo le ha sucedido.

Նախդրավոր դարձվածներով ձևավորված կապակցություններ՝ 62%, օր.՝ Նրան օրենքով դադիւնիցին: - Fue juzgado conforme a la ley.

14.Ներգործողի իմաստ. Արտահայտվում է հայերենի երկու՝ բացառական և գործիական հոլովներով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 75%, օր.՝ Տանիքները պոկվել էին վիոթորկից: - Los techos fueron arrancados por la tormenta.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 25%, օր.՝ Գեղինը ծածկվեց անձրևի կաթիլներով: - *El suelo se cubrió de (de por) gotas de lluvia.*

15. Նյութի իմաստ. Արտահայտվում է հայերենի երկու՝ բացառական և գործիական հոլովներով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ **Ավերակներից** պուն սպեղծեցին: - *Construyeron una casa de las ruinas.*

16. Կոչական. Արտահայտվում է հայերենի ուղական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ **Ճամփո՞րդ, ինչո՞վ կարող եմ քեզ օգնել** - *Viajero, ¿Cómo puedo ayudarte?*

17. Պատկանելության իմաստ. Արտահայտվում է հայերենի սեռական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ **Էլ արտադարձը վերադարձվում է պերությանը:**

18. Հանգման իմաստ. Արտահայտվում է հայերենի դրական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ *El auto chocó contra un árbol y se detuvo.* - **Ավտոմեքենան հարվածեց ծառին և կանգ առավ:**

19. Կապի իմաստ. Արտահայտվում է հայերենի դրական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ **Համակերպել է իր միայնության ու դառը կյանքին:** - *Se resignó a su soledad y vida dura.*

20. Հաղորդման իմաստ. Արտահայտվում է հայերենի դրական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ **Հիվանդանոցից հեռացան և անգամ բժշկին դեղյակ չպահեցին:** - *Se fueron del hospital y ni siquiera informaron al médico.*

21. Ստացականության իմաստ. Արտահայտվում է հայերենի դրական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ **Մեր խնդիրներին վերջ չկա:** - *No hay final a nuestros problemas.*

22. Փոխարինվողի իմաստ. Արտահայտվում է հայերենի դրական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ **Երթափոխի բժիշկը փոխարինեց վարառող բժշկին:** - *El médico de guardia reemplazó al médico enfermo.*

23. Համապատասխանության իմաստ. Արտահայտվում է հայերենի դրական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 50%, օր.՝ Նա աղքադներին ընկեր չէ: – *No es amigo a los pobres.*

Աննախդիր (Օ նախդիր) կապակցություններ՝ 50%, օր.՝ Արժանի է ամենալավ աշխագրանքին: – *Se merece (Օ) lo mejor trábalo.*

24. Անջատման իմաստ. Արտահայտվում է հայերենի բացառական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ **Ցեղասպանությունից** մազապուրծ եղած հայերը սարսափով էին հիշում եղելությունը: – *Los armenios escapados del genocidio recordaban el incidente con horror.*

25. Պատճառի իմաստ. Արտահայտվում է հայերենի բացառական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 50%, օր.՝ **Տանջվում էր գլխացավից:** – *Estaba sufriendo de un dolor de cabeza.*

26. Վերաբերության իմաստ. Արտահայտվում է հայերենի բացառական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ **Ոչինչ չգիտես ո՛չ աշխարհից, ո՛չ էլ դրա հաճույքներից:** – *No sabes nada sobre el mundo ni sobre sus deleites.*

Համեմատության իմաստ. Արտահայտվում է հայերենի բացառական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ **Ժամանակակից համակարգիչները հին համակարգիչներից անհամեմատելի հզոր են և ապահով:** – *Las computadoras modernas son incomparablemente más poderosas y seguras de las computadoras más antiguas.*

27. Միջոցի իմաստ. Արտահայտվում է հայերենի գործիական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 36%, օր.՝ **Ձեռքով փորագրեց արձանը:** – *Talló la estatua a mano.*

Բարդ նախդրավոր կապակցություններ՝ 14%, օր.՝ **Բոլոր հեռուստաալիքներով գեղեկացվում է հայերի հեղափոխության մասին:** – *Por (de por) todos los canales de televisión se informa sobre la revolución armenia.*

Նախդրավոր դարձվածքներով ձևավորված կապակցություններ՝ 50%, օր.՝ **Նայում էր հեռադիտակով:** – *Estaba mirando a través de binoculares.*

28. Ջևի իմաստ. Արտահայտվում է հայերենի գործիական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ **Անձրւը թափվում էր մեծ կաթիլներով:** – *La lluvia caía en grandes gotas.*

29. Միասնության իմաստ. Արտահայտվում է հայերենի գործիական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ Ընդանիքներով հեռացան երկրից: – Salieron del país con sus familiares.

30. Փոխարինողի իմաստ. Արտահայտվում է հայերենի գործիական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 100%, օր.՝ Ոչ բոլորին է հաջողվում ափելությունը փոխարինել սիրով: – No todos pueden reemplazar el odio por el amor.

31. Ներառման կամ ընդգրկման իմաստ. Արտահայտվում է հայերենի ներգյական հոլովով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 50%, օր.՝ Պայմանագրում ամեն ինչ գրված է: – Todo está escrito en el acuerdo.

Բարդ նախդրավոր կապակցություններ՝ 50%, օր.՝ Այգում բազմաթիվ մրգազուր ծառեր կան: – Hay muchos árboles frutales en (hasta en) el jardín.

Հայերենի՝ հոլովներով ու կապերով արտահայտված իմաստների և այդ իմաստների իսպաներեն համարժեքների շարքում նկատելի են հետևյալ արտահայտությունները.

1. Ժամանակային իմաստ. Արտահայտվում է հայերենի չորս՝ սեռական, դրական, հայցական և բացառական հոլովներով ու կապերով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 32%, օր.՝ Տիգրան Մեծի օրոք (Ժամանակ) Հայաստանը հղոր պետություն էր: – Armenia era un estado poderoso bajo Tigran el Grande.

Անախդիր (Փ նախդիր) կապակցություններ՝ 4%, օր.՝ Տարիներ առաջ եմ դիմում նրան: – Lo vi hace Ø años.

Բարդ նախդրավոր կապակցություններ՝ 28%, օր.՝ Քեզ մինչև շաբաթ չեմ դիմում ելու: – No te veré hasta (hasta con, hasta para, hasta por) el sábado.

Նախդրավոր դարձվածքներով ձևավորված կապակցություններ՝ 36%, օր.՝ Այն ժամանակից ի վեր երազում է այդ օրվա մասին: – Desde entonces que está soñando de ese día.

2. Տարածական իմաստ. Արտահայտվում է հայերենի չորս՝ սեռական, դրական, հայցական և բացառական հոլովներով ու կապերով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 24%, օր.՝ Հսկայական դրան մեջ միայնակ էր ապրում: – Vivía solo en una gran casa.

Բարդ նախդրավոր կապակցություններ՝ 21%, օր.՝ Չեմ սիրում, եթք հագուստով պառկում են անկողնու վրա: – *No me gusta cuando se acostan con ropa en (sobre, de sobre, hasta sobre, para sobre, encima de) la cama.*

Նախդրավոր դարձվածքներով ծնավորված կապակցություններ՝ 55%, օր.՝ Աշխատանքին վայրը դանից հեռու չէ, վերջին խաչմերուկի մոտ: – *El lugar de mi trabajo no está lejos de la casa, está cerca del (cabe) último cruce.*

3. Բացահայտման իմաստ. Արտահայտվում է հայերենի երկու՝ սեռական և սեռական հոլովներով ու կապերով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Աննախդիր (Փ նախդիր) կապակցություններ՝ 100%, օր.՝ Աննան՝ **որպես** բաղադրի ամենալավ **հաշվապահ**, աշխատանքային բազմաթիվ առաջարկներ ունի: – *Ana, como la mejor contadora de la ciudad, tiene muchas ofertas de trabajo.*

4. Միասնության իմաստ. Արտահայտվում է հայերենի երկու՝ սեռական և գործիական հոլովներով ու կապերով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 33%, օր.՝ Երեխաներն աշխատում են իրենց **հոր հետ** օրավարձով: – *Los hijos trabajan a jornalero con (de con) su padre.*

Բարդ նախդրավոր կապակցություններ՝ 50%, օր.՝ Սովորություն ունի ժամերով զրոյցի **հարևանների հետ**: – *Tiene la costumbre de hablar con (para con) los vecinos por horas.*

Նախդրավոր դարձվածքներով ծնավորված կապակցություններ՝ 17%, օր.՝ **Հարսությամբ հանդերձ՝** շատ առարկաձեռն է: – *Con (junto con) la riqueza, era muy generoso.*

5. Բացառման իմաստ. Արտահայտվում է հայերենի երկու՝ սեռական և բացառական հոլովներով ու կապերով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 40%, օր.՝ Շրջագայել է ամբողջ Եվրոպայով՝ **բացի Ռումինիայից**: – *Ha viajado por toda Europa, excepto (salvo) Rumania.*

Բարդ նախդրավոր կապակցություններ՝ 20%, օր.՝ **Լավությունից բացի՝** ամեն ինչ անում էր: – *Excepto de (a excepción de) la bondad hacía todo.*

Նախդրավոր դարձվածքներով ծնավորված կապակցություններ՝ 40%, օր.՝ **Քրոջից բացի՝** այլ հարազարներ չուներ: – *Además de su hermana no tenía otros familiares.*

6. Հակադրության իմաստ. Արտահայտվում է հայերենի երկու՝ սեռական և գործիական հոլովներով ու կապերով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 50%, օր.՝ իմ վախը քո վճռականության դեմ ոչինչ է: – *Mi miedo contra (en contra de, frente a) tu determinación es nada.*

Նախդրավոր դարձվածքներով ձևավորված կապակցություններ՝ 50%, օր.՝ **Ունակություններով հանդերձ՝** վաստ էր սովորում: – *A pesar de sus habilidades, estaba estudiando mal.*

7. Համապատասխանության իմաստ. Արտահայտվում է հայերենի երկու՝ սեռական և տրական հոլովներով ու կապերով: Խսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 31%: Խորիրդի որոշման համաձայն՝ սրանձնեց այդ պաշտոնը: – *Según (de acuerdo con) la decisión del consejo, asumíó ese cargo.*

Նախդրավոր դարձվածքներով ձևավորված կապակցություններ՝ 69%: Կվարձագրովս քո աշխատածին համապատասխան: – *Se te pagará conforme a lo que trabajes.*

8. Նմանության իմաստ. Արտահայտվում է հայերենի ուղղական հոլովով ու կապերով: Խսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Աննախդիր (Փ նախդիր) կապակցություններ՝ 100%, օր.՝ Կյանքի դժվարություններն ընկալվում են որպես փորձություն: – *Las dificultades de la vida se perciben como una prueba.*

9. Վերաբերության իմաստ. Արտահայտվում է հայերենի սեռական հոլովով ու կապերով: Խսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 37%, օր.՝ Միշտ խոսում էին ներքին քաղաքականության մասին: – *Siempre hablaban sobre (de, de sobre, acerca de, hasta sobre, para sobre, por sobre, a de) la política interior.*

Բարդ նախդրավոր կապակցություններ՝ 55%, օր.՝ Չէր կարողանում թաքցնել այելությունը հարազարժների հանդեա: – *No podía ocultar el odio por (hacia, de hacia) los familiares.*

Նախդրավոր դարձվածքներով ձևավորված կապակցություններ՝ 8%, օր.՝ Միշտ խոսում էին ներքին քաղաքականության մասին: – *Siempre hablaban acerca de (de, de sobre, hasta sobre, sobre, para sobre, por sobre, a de) la política interior.*

10. Նպատակի իմաստ. Արտահայտվում է հայերենի սեռական հոլովով ու կապերով: Խսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 32%, օր.՝ Օրնիրուն աշխատում էր երեխայի ապագայի համար: – *Todo el día estaba trabajando por el porvenir del hijo.*

Բարդ նախդրավոր կապակցություններ՝ 12%, օր.՝ Բժիշկը հիվանդին հեղագովածան համար ուղեղիր տվեց: – *El médico dió al paciente un volante médico para (por, para de, hasta para) la examinación.*

Նախդրավոր դարձվածքներով ծևավորված կապակցություններ՝ 56%, օր.՝ Օգնության նպատակով գումար նվիրաբերեց որբ երեխաններին: – *Con el objeto de (con el propósito de, con el fin de) la ayuda hizo donativo a los huérfanos.*

11. Պատճառի իմաստ. Արտահայտվում է հայերենի սեռական հոլովով ու կապերով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 29%, օր.՝ Մահացավ ծանր իիվանդության պարճառով: – *Murió por (a causa de, por causa de, por culpa de, debido a) la enfermedad grave.*

Նախդրավոր դարձվածքներով ծևավորված կապակցություններ՝ 71%, օր.՝ Քրիստոնեան աշխաղանքի շնորհիվ հասավ նպատակին: – Alcanzó su meta gracias a (por) su trabajo duro.

12. Փոխարինվողի իմաստ. Արտահայտվում է հայերենի սեռական հոլովով ու կապերով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 50%, օր.՝ Ունեցվածքը բռնագրավեց պարտքի դիմաց: – *La propiedad fue confiscada por (ante) deudas.*

Նախդրավոր դարձվածքներով ծևավորված կապակցություններ՝ 50%, օր.՝ Կարենի փոխարեն հայրն էր ամորթից շիկնել: – En vez de (en lugar de) Karen, su padre se sonrojó de vergüenza.

13. Միջոցի իմաստ. Արտահայտվում է հայերենի սեռական հոլովով ու կապերով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 33%, օր.՝ Համաձայնության եկան բազմաթիվ հանդիպումների միջոցով: – *Lograron el acuerdo mediante muchas reuniones.*

Նախդրավոր դարձվածքներով ծևավորված կապակցություններ՝ 67%, օր.՝ Բարդ վիրահապություններ են իրականացվում նորագույն բժշկական սարքավորումների միջոցով: – *Las cirugías complejas se realizan por medio de (a través de) los equipos médicos de última generación.*

14. Չափի իմաստ. Արտահայտվում է հայերենի հայցական հոլովով ու կապերով: Իսպաներեն համարժեք արտահայտություններում ունենք.

Պարզ նախդրավոր կապակցություններ՝ 25%, օր.՝ Միջև հարյուր զինվոր եկավ: – *Llegaron hasta (hasta con, hasta de, hasta por) cien soldados.*

Բարդ նախդրավոր կապակցություններ՝ 75%, օր.՝ Չէր կարող մինչև այդ ասդիճան վարկաբեկվել: – *No podía desacreditarse hasta tal grado.*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Եզրակացություններ բաժնում տրվում են սույն հետազոտության ողջ շարադրանքից բխող հետևյալ եզրահանգումները.

1. Հոլովի քերականական կարգը լեզուների նմանությունների ու տարբերությունների որոշման կարգերից մեկն է: Աչքի է ընկնում իր հարուստ

իմաստային դաշտով՝ անկախ այն հանգամանքից, որ որևէ լեզու չի կարող ներկայանալ հաստատուն իմաստային դաշտով։ յուրաքանչյուր լեզու ունի իրեն բնորոշ իմաստային համակարգ և այդ համակարգում առկա իմաստների արտահայտության համար տարբեր տիպային հատկանիշներ՝ դրանցից մեկի գերակշռությամբ։

2. Հոլովի քերականական կարգը, ինչպես և ցանկացած քերականական հարց, զերծ չի մնում տարատեսակ մեկնաբանություններից։ բանավեճերը գլխավորապես պայմանավորված են հոլովի սահմանման, քանակի, ձևային և իմաստային հատկանիշների գնահատմամբ։

3. Աշխարհի լեզուներում գրանցված հոլովների քանակական տարբերությունը (2-48) ունի օրինական-լեզվական և սուբյեկտիվ-լեզվաբանական պատճառներ։

4. Հոլովների քանակի և լիարժեք սահմանման հարցն ուղղակիորեն կապվում է հոլովական իմաստների հարցին։

5. Ժամանակակից հայերենի հոլովական համակարգը գերազանցապես համադրական տիպի է, որում հոլովական իմաստներն արտահայտվում են կցականության և թերականության եղանակով՝ առաջինի գերակշռությամբ։

6. Հոլովի ձևային հատկանիշներին առաջնություն տվիդ լեզվաբանները հինգ հոլովի կողմնակիցներ են։ Յոթ հոլով նախընտրող լեզվաբանները կարևորում են հոլովի իմաստային կողմը։ Վեց հոլովի տեսության համախոհները ժխտում են հայցականը և գտնում, որ սեռականը անկախ հոլով է։

7. Հոլովների իմաստային դաշտի լիարժեք նկարագրության համար կարևոր տեղ է հատկացվում կապերով արտահայտվող իմաստներին՝ որպես հոլովների վերլուծական համարժեների։

8. Թե՛ կապերը և թե՛ հոլովածներն աչքի են ընկնում իրենց բազմիմաստությամբ։ Լեզվական երկու միավորներն էլ կարող են արտահայտել ընդհանուր և տարբեր իմաստներ։

9. Ժամանակակից հայերենի հոլովական իմաստները ներկայացվում են որոշ հոլովածներով և որոշ հոլովածներով ու կապերով արտահայտվող իմաստների միջոցով, որոնց դիմաց իսպաներենում կիրառվում են գերազանցապես վերլուծական (նախդրավոր) կաղապարներ։

10. Իսպաներենի նախդրիրներն իրենց վրա են կրում բացակայող հոլովածների դերի գերակշիռ մասը։ Դա է պատճառը, որ իրենց հարացուցային քանակով դրանք գերակշռում են հայերենի կապերին և կապական կապակցություններին։

11. Պարզ նախդրիրներով կազմված կառուցները գերակշռում են այն դեպքում, երբ հայերենում հոլովական իմաստներն արտահայտվում են որոշ հոլովածներով։

12. Բարդ նախդիրներով և նախդրավոր դարձվածքներով ձևավորված կառուցների գերակայությունը զգայի է այն դեպքում, երբ հայերենի հոլովական իմաստներն արտահայտվում են հոլովածերով և կապերով:

Իբրև ընդհանուր դիտարկում կարելի է նշել, որ որքան որոշակի են հայերենի հոլովածերով արտահայտված իմաստները, այնքան միատիպ են դրանց իսպաներեն համարժեքների արտահայտման միջոցները: Միատիպությունն արտահայտվում է նախդրավոր կապակցությունների քանակական աճի կամ էլ սահմանափակ քանակով նախդիրների օգտագործման ձևով:

Վերոնշյալ վերլուծությունները բերում են հետևյալ եզրահանգման. լեզուները չեն կարող ներկայանալ մաքուր տիպով, և դրանցից յուրաքանչյուրում կարելի է նկատել տարբեր տիպարանական հատկանիշների համատեղում այս կամ այն հատկանիշի քանակական գերակշռությամբ:

Աղենախոսության հիմնական դրույթներն արդացոլվում են հետևյալ հրապարակումներում.

1. Մելքոնյան Ն., Հեզուների նմանությունների ու դարբերությունների որոշման սկզբունքների հարցը //Հայագիտական հանդես, N 2-3 (26-27), Երևան, 2014, էջ 31-46:

2. Մելքոնյան Ն., Սեռական հոլովի իմաստային դաշտը հայերենում և իսպաներենում //Հայագիտական հանդես, N 3 (33), Երևան, 2016, էջ 38-55:

3. Մելքոնյան Ն., Հոլովական իմաստների արդահայտումը ըստ հայ և իսպանացի բերականագերների // ԵՊՀ Հայագիտության հարցեր, N 1 (7), Երևան, 2016, էջ 153-167:

4. Մելքոնյան Ն., Ժամանակային իմաստների արդահայտումը հայերենում և իսպաներենում //Կանյեղ (գիտական հոդվածների ժողովածոլ), N 4 (77), Երևան, Ասորիկ հրատ., 2018, էջ 121-128:

5. Մելքոնյան Ն., Հայերենում և իսպաներենում դարածական իմաստների արդահայտման զուգադրական բննություն // Հայագիտական հանդես, N 4 (42), Երևան, 2018, էջ 15-25:

6. Մելքոնյան Ն., Հոլովական որոշ իմաստների արդահայտումը իսպաներենի գործառնությունին (հայերենի հետ զուգադրությամբ) // Պատմաբանասիրական հանդես, N 2, Երևան, 2019, էջ 200-210:

МЕЛКОНЯН НАРИНЕ СТЕПАНОВНА
ЭКВИВАЛЕНТЫ ПАДЕЖНЫХ ЗНАЧЕНИЙ АРМЯНСКОГО В ИСПАНСКОМ
ЯЗЫКЕ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02. «Общее и сравнительное языкознание».

Защита диссертации состоится 31 октября 2022г. в 15⁰⁰ часов на заседании специализированного совета 019 ВАК по специальности “Языкознание”, действующего при Институте языка им. Г.Ачаряна НАН РА по адресу: 0015, Ереван, ул. Григор Лусаворич, 15.

РЕЗЮМЕ

Данная диссертация посвящена проблеме выявления падежных значений армянского языка и их эквивалентов в испанском. Вопрос выражения падежных значений – один из самых обсуждаемых в языкознании. Падежные значения характерны для всех без исключения языков, но падежи имеются не во всех языках. В данной работе для сравнения были выбраны армянский язык, имеющий падежную систему, и испанский, в котором эквиваленты падежных значений армянского выражены предложными сочетаниями, то есть аналитическим способом.

Актуальность темы:

Сделать сопоставительный анализ падежной системы армянского и испанского языков который до сих пор не удостоен полного исследования, несмотря на связь с материалами, необходимыми для практического применения (имеющиеся наблюдения касаются изучения частных сторон исследуемой проблемы).

Уделить возможность исследователям, выполняющим сопоставительную работу, касающуюся армянского и испанского языков; а) пересмотреть и переоценить распространенные комментарии о падеже, падежных значениях, связках и предлогах; б) изучить испанские эквиваленты каждого из падежных значений армянского языка, перечисленных по частоте их применения.

Увеличить количество способов выявления общих черт и отличительных особенностей сравниваемых языков, а также их возможной реализации в плане содержания и выражения.

Цель исследования:

Максимально подробно представить падежные значения армянского языка и эквиваленты выражения соответствующих значений в испанском.

Внести нашу скромную лепту в изучение сходств и различий в значениях, появившихся в результате соотнесения слов в армянском и испанском языках.

С помощью результатов проведенного нами сопоставительного анализа

уделить возможность составить представление о разных синтаксических применениях значений, выражаемых падежами, и о семантическом содержании этих падежей.

Практической целью является:

Частичное упрощение процесса освоения испанского языка армяноязычным обществом.

Привнесение пользы в расширение армяноведческих и испановедческих исследований.

Новизна исследования:

Впервые в армянском языкоznании проводится сопоставительный анализ падежных значений армянского языка и их эквивалентов в испанском.

Кроме проведенного нами сопоставительного анализа в работе сделана попытка внести новшество в сфере освещения проблем, возникших при выявлении общих черт и отличительных особенностей в сравниваемых языках.

С учетом вышеперечисленных обстоятельств, диссертация, пожалуй, обретает определенную ценность, поскольку работа является попыткой систематизированного описания и многостороннего анализа падежных значений в армянском и тюжественных значениях в испанском языке.

Структура работы исходит от целей и задач, поставленных перед диссертацией. Основная часть работы (179 страниц) состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы. К ней прилагается приложение в объеме 43 страниц.

Введение. Здесь кратко излагаются принципы и методы исследования. Теориями, представленными в данном разделе, обосновывается выбор всего материала исследования.

Первая глава. “Основополагающие вопросы понимания падежной системы”. В данной главе отражены общелингвистические и армяноведческие определения грамматической категории падежа. Состоит из двух параграфов, где обстоятельно представлен ряд языковедческих теорий по оценке грамматической категории падежа, а также формальных и содержательных характеристик падежа.

В данной главе диссертации подробно говорится об определении падежа, о классификации падежей и трех теориях о падеже, существующих в армянском языковедении.

Вторая глава. “Падежные и связочные системы в современном армянском языке и эквивалентные им конструкции в испанском”. В данной главе затрагиваются существующие восприятия и мнения о падежах современного языка, связочных сочетаниях, а также о предложных сочетаниях испанского языка, дается описание семантических полей падежей. Вкратце представляются проблемы восприятия падежной семантики, а также общая

картина основных и частных значений падежей, которая и становится основной для сравнения армянского и испанского в последней главе диссертации.

Третья глава. “Падежи армянского языка и эквивалентные им формы в испанском”. Материал, представленный в первой и второй главах исследования, составляет основу для анализов, проведенных в последней – третьей главе работы. Третья глава полностью посвящена сопоставительному анализу падежей армянского языка и форм, эквивалентных падежным значениям армянского, в испанском языке. Состоит из семи параграфов, в каждом из которых основные результаты сопоставительного анализа представленного материала выражены через итоговую таблицу. В параграфах 3.1 – 3.7 по частоте использования представлены значения армянского языка, выражаемые только посредством падежей и посредством падежей и связок. Даются также модели выражения данных значений в армянском языке с соответствующим каждой испанским эквивалентом.

В заключении вкратце представляются результаты, достигнутые в ходе исследования.

NARINE STEPAN MELKONYAN
MEANINGS OF ARMENIAN CASES AND THEIR EQUIVALENTS IN SPANISH

Dissertation for the degree of Candidate of Philological Sciences for speciality 10.02.02. – “General and Comparative Linguistics”.

The defence will take place on 31st of October 2022, at 3:00 pm, at the session of Council 019 specialised in Linguistics of Hrachya Acharian Institute of Language Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia (address: 15 Grigor Lusavorich str., 0015 Yerevan, Armenia).

SUMMARY

The dissertation explores the main issues of revealing the semantics of Armenian cases and their equivalents in Spanish. The issue of case meanings is one of the most researched ones in Linguistics. Irrespective of the language system, all languages comprise case meanings, but not all of them have cases. The two languages were chosen to conduct a contrastive study between Armenian, with explicitly marked case system and Spanish, where the respective prepositions express the equivalents of the case meanings in Armenian, i.e., analytically.

The relevance of the research is:

- to carry out a contrastive analysis of the case system in Armenian and its equivalents in Spanish – not properly analysed yet. Though the study mainly encompasses practical data, the observation partially touches upon some relevant subject matter aspects,
- to enable researchers to perform contrastive studies for (a) reconsidering and re-evaluating all the theories circulating about the case, case meanings, connectives and prepositions and (b) studying the Spanish equivalents of each Armenian case meaning – according to the frequency of use,
- to increase the number of possible ways of reveal the convergent and divergent features in the languages in contrast, as well as in their realization from formal and content-based perspectives.

The aim of the research is:

- to thoroughly present the Armenian case meanings and their corresponding Spanish equivalents;
- to have our modest investment in the study of similar and different meanings in Armenian and Spanish emerging in the result of form and meaning relation;
- to enable to get a clear idea about the meanings encoded in different cases in various syntactic functions.

The practical value is to facilitate, to some extent, the process of assimilation of Spanish for the Armenian-speaking community, to be helpful for the expansion of Armenian studies and Spanish studies research.

The research novelty derives from the fact that, in Armenian linguistics, it is the first attempt to carry out a contrastive study of case/declension meanings and the corresponding formal equivalents in Spanish. Apart from the contrastive study we have conducted, the research tries to shed light on the convergent and divergent features of the languages studied.

Due to all mentioned above, the research is highly valued, as it involves both systematic and multifaceted description of case meanings in the Armenian and Spanish languages.

The research paper is structured and submitted in line with the aims and objectives of the study detailed.

The dissertation comprises 179 pages and consists of an introduction, three chapters, conclusions and a bibliography list. There is also a 44-page-long appendix attached to the research paper.

The introduction part briefly outlines the principles and methods of research.

Chapter 1: "Main Issues of Understanding Case System"

It involves general linguistic interpretation of the case as a grammatical category. The chapter consists of two sub-chapters, which detail a number of linguistic theories concerning the semantic and formal features of the case as a grammatical category. This chapter comprises the definition, classification of the case and three theories recurrent in the Armenian linguistic schools.

Chapter 2: "Declensional and Prepositional Systems in Modern Armenian and their Corresponding Structures in Spanish"

This chapter comprises the general perceptions of declensional and prepositional meanings in contrastive languages. This chapter introduces, in brief, the main issues of understanding case meanings, and it outlines the primary and secondary meanings of cases, which further on in the research, become the main topic of our study.

Chapter 3: "Cases in the Armenian Language and their Equivalents in Spanish"

The research conducted in the first and second chapters lays the basis of the last chapter. Chapter 3 is entirely dedicated to the contrastive study of the declensional meanings in the Armenian language and their corresponding meanings in Spanish. It consists of seven subchapters. In each of them, the main result of the research is displayed in summarising tables 3.1-3.7. The subchapters refer to the meanings expressed through either cases or prepositions / postpositions according to the frequency of their use. The structural patterns of adduced Armenian case meanings with their Spanish equivalents are also introduced in the research.

As the last part of the research, the conclusions contain the highlights of the results of all the observations introduced in the thesis.